

**ՀՐԱՆՈՒՇ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ԹԱՄԱՐԱ ՀԱՎՈՐՅԱՆ**

**Ֆ. ՍՔՈԹ ՖԻՑՋԵՐԱԼԴԻ «ՄԵԾՆ ԳԵԹՍԲԻՆ»
ՎԵՊԻ ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ
ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴՐԱՆՑ
ԿԱՆԽԵՆԹԱԴՐՈՒԹԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՊԱՅՊԱՆՍԱՆ
ՏԵՍԱՆԿՅՈՒՆՈՒՄ**

Թարգմանչի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը թարգմանվող տեքստի և դրանում տեղ գտած դարձվածքի կանխենթադրության բնութագրի ճիշտ ընկալումն ու թարգմանվածքի մեջ արտացոլումն է: Եթե թարգմանչին հաջողվում է հաղթահարել տվյալ խնդիրը, ապա կարելի է ասել, որ նա կատարում է համահեղինակի դեր:

Ինչպես հայտնի է, կանխենթադրույթը իմաստաբանության և գործաբանության կարևորագույն հասկացություններից մեկն է: Այն հայտնվել է լեզվաբանների ուշադրության կենտրոնում 20-րդ դարի 60-70-ական թվականներին: Դրան տվել են տրամաբանական, իմաստաբանական, գործաբանական և հիբրիդ մեկնաբանություններ, որոնց կանոնադառնաց դարձվածքների կանխենթադրությունների մասին խոսելիս: Այդ մոտեցումները տարբեր սահմանումներ են տալիս կանխենթադրության գաղափարի վերաբերյալ, սակայն արդյունքում բոլոր սահմանումներն էլ, որոշ վերապահումներով գրեթե նույնն են: Այն է՝ կանխենթադրույթը արտահայտում է ասության/տեքստի ներակա իմաստները, որոնք չեն արտահայտվում արտակա ձևով, բացահայտ չեն երևում տեքստում, սակայն առկա են դրանում և շատ անգամ կարևոր տեղեկատվություն են հաղորդում այս կամ այն իրողության մասին: Ամփոփելով կանխենթադրության տրված սահմանումները կարելի է ասել, որ

1. կանխենթադրությունները ասությանց ընկալվող, այլ ոչ թե ուղղակիորեն հաստատվող ենթադրություններ են,

2. դրանք սերում են ասություններ կազմող բառաքերականական կառույցների իմաստներից,

3. կանխենթադրությունները կարող են դուրս բերվել նույնիսկ համատեքստի մասամբ կամ լրիվ բացակայության դեպքում:

դարձվածքների կանխենթադրույթների ջննդության խնդիրը հետաքրքրության առարկա է թե՛ իմաստաբանության և թե՛ գործաբանության համար: Այս խնդրի ուսումնասիրությամբ զբաղվել են մի շարք լեզվաբաններ, որոնցից է 20-րդ դարի գերմանացի լեզվաբան Յուրգ Շթրեսլերը, որն իր «Անգլերենի դարձվածքները. գործաբանական վերլուծություն» աշխատության մեջ առանձնակի ուշադրություն է դարձրել դարձվածքների կանխենթադրույթների վերլուծությանը:

Ըստ Յ. Շթրեսլերի՝ դարձվածքները՝ տվյալ համատեքստում օգտագործված, կարող են վերաբերել ինչպես դրանց նախորդող համատեքստին, այնպես էլ նպաստել հետագա համատեքստի ծավալմանը: Սակայն երբ մի որևէ դարձվածք օգտագործվում է հաղորդակցման թեմայից դուրս, ապա այն, որպես կանոն, միտված է փոխելու հաղորդակցման թեման, դրա զարգացման ընթացքը: Յ. Շթրեսլերը տարբերակում է 3 տիպի կանխենթադրույթներ, որոնք կազմում են դարձվածքների ներակա բովանդակությունը՝ տրամաբանական, իմաստաբանական, գործաբանական:

Տրամաբանական կանխենթադրույթները բնորոշվում են դատողությունների միջև որոշակի հարաբերությամբ, *իմաստաբանականները*՝ նախադասությունների միջև հարաբերությամբ, իսկ *գործաբանական* կանխենթադրույթները բնորոշվում են նախադասությունների և պրոպոզիցիաների միջև հարաբերությամբ: *Տրամաբանական կանխենթադրույթները* արտացոլում են 2 դատողությունների միջև եղած հարաբերությունը և սահմանվում հետևյալ կերպ.

Տ դատողությունը տրամաբանորեն կանխենթադրում է Տ' միայն

(i) եթե *S* ճշմարիտ է, *S'* ճշմարիտ է;

(ii) եթե *S* կեղծ է, *S'* ճշմարիտ է:

Համաձայն առաջին սահմանափակման՝ դարձվածքներն օգտագործվում են ոչ միայն դատողություններում, այլև հարցական, հրամայական և խնդրանք արտահայտող նախադասություններում: Իսկ համաձայն երկրորդի՝ անկախ նախադասության ձևից՝ հաստատական, թե հարցական, դրանցում օգտագործված դարձվածքների կանխենթադրույթները չեն հերքվում:

Դիտարկենք /1/ օրինակը, որից կարող ենք առանձնացնել /2/ դարձվածքը: /1/ *ա. ... uh my instinct and training is to be very careful to suppress my own point of view because I don't want my employers saying well you were grinding your own axe and indeed it doesn't happen... բ. ... ահ իմ բնազդն ու կրթությունը պետք է շատ զգույշ լինեն իմ սեփական տեսակետը զսպելու հարցում, քանի որ չեն*

ցանակնում, որ իմ գործատուներն ասեն... դե դու քո սեփական շահն էիր հետապնդում, որն իհարկե այդպես չէ:

/2/ ա. you were grinding your own axe

բ. դու քո սեփական շահն էիր հետապնդում

Քանի որ գործ ունենք տրամաբանական կանխենթադրույթների հետ, որոնք նախադասությունների իմաստի մաս են կազմում անկախ համատեքստից, կատարվել է /2/ դարձվածքի հետևյալ վերլուծությունը: Այսպիսով, /2/ դարձվածքի բառացի պատճենը /3/-ն է:

/3/ ա. You were trying to gain personal profit.

բ. Դու փորձում էիր սեփական շահն ունենալ:

Այսպիսով, /2 -ի տրամաբանական կանխենթադրույթը /4/-ն է:

/4/ Իրականում կա մեկը, որին վերաբերում է /you/-ն՝ /դու/-ն:

Ախնույն ժամանակ /3/-ը պարունակում է /5/ հաստատումը:

/5/ ա. Whoever is meant by /you/ is trying to gain personal profit.

բ. Ում էլ որ նկատի ունես /դու/ ասելով՝ նա փորձում է սեփական շահն ունենալ:

Արդյունքում ստացվում է /6/-ը:

/6/ ա. Whoever is meant by /you/ is grinding his own axe.

բ. Ում էլ որ նկատի ունես /դու/ ասելով՝ նա իր սեփական շահն է հետապնդում:

/6/-ը կարող է 2 տարբեր մեկնաբանություն ունենալ: Կամ խոսողը առանձին-առանձին դիտարկում է դարձվածքը կազմող բառույթների իմաստները և ապա համադրելով ստանում ամբողջի բառացի իմաստը, կամ դիտարկում է դարձվածքը որպես մեկ կուռ միավոր՝ *to grind one's own axe* / սեփական շահը հետապնդել, որը նշանակում է՝ *to try to gain personal profit*/ փորձել սեփական շահն ունենալ:

Առանձին վերցված /5/ և /6/-ը /2/-ի հաստատումներն են, մինչդեռ /3/-ը բաղկացած է միայն մեկ հաստատումից՝ /5/-ից:

Եթե սահմանափակվենք միայն տրամաբանական կանխենթադրույթների դիտարկմամբ, ապա պետք է ընդունենք, որ /2/-ը և դրա համապատասխան բառացի պատճենը՝ /3/-ը, բաղկացած են տարբեր հաստատումներից և մեկ ընդհանուր բաղադրիչից՝ /4/-ից:

Որպեսզի համոզվենք, որ /4/-ը իսկապես կանխենթադրույթ է, կարող ենք փորձարկել այն տարբեր տեսանկյուններից, օրինակ՝ ժխտման միջոցով: Այսինքն՝ պետք է ապացուցենք, որ /2/-ի և /3/-ի ժխտական ձևերը՝ /7/ և /8/-ը, պարունակում են /4/ բաղադրիչը:

/7/ ա. You weren't grinding your own axe.

բ. Դու քո սեփական շահը չէիր հետապնդում:

/8/ ա. You weren't trying to gain personal profit.

բ. Դու չէիր փորձում քո սեփական շահն ունենալ:

Այստեղից ակնհայտ է, որ երկուսն էլ՝ /7/ և /8/-ը, բավարարում են նշյալ պայմանը և /4/-ը տրամաբանական կանխենթադրույթ է: Բացի այդ /4/-ը տրամաբանական կանխենթադրույթ է, երբ /2/ և /3/-ը կիրառվում են եղանակավորող բայերի՝ /9/, /10/, տրամաբանական կապերի՝ /11/, /12/ հետ և մտնում դրանց շրջանակի մեջ:

/9/ ա. You shouldn't grind your own axe.

բ. Դու չպետք է սեփական շահդ հետապնդես:

/10/ ա. You shouldn't try you gain personal profit.

բ. Դու չպետք է փորձես քո սեփական շահն ունենալ:

/11/ ա. You hammered away and were grinding your own axe.

բ. Դու ջանասիրաբար աշխատում էիր և սեփական շահդ հետապնդում:

/12/ ա. You hammered away and were trying to gain personal profit.

բ. Դու ջանասիրաբար աշխատում էիր և փորձում քո սեփական շահն ունենալ:

Քանի որ մենք դիտարկում ենք դարձվածային միավորները տեքստից դուրս, ապա դիտարկենք հայտնի /13/ նախադասությունը:

/13/ ա. X died. բ. X-ը մահացավ:

Այս նախադասությունից հետևում է /14/ պրոպոզիցիան:

/14/ ա. X is no longer alive. բ. X-ը այլևս կենդանի չէ:

/14/-ը անհրաժեշտաբար ճշմարիտ է, եթե /13/-ը ճշմարիտ է:

Դիտարկենք /15/ արտահայտությունը՝ /15/ ա. X kicked the bucket. բ. X-ը շունչը փչեց: Եթե /15/-ը համարվում է դարձվածային արտահայտություն, ապա /14/-ը ճիշտ և տեղին պրոպոզիցիա է:

Այսպիսով, հետևության մեկնաբանման համար պետք է դիտարկել նախադասությունները ոչ թե լեզվում՝ տեքստից դուրս, այլ օգտագործման մեջ: Առաջին անգամ նմանատիպ մոտեցում առաջարկել է Փ. Սթրոուսոնը՝ ի պատասխան Բ. Ռասելի ճշմարտացիության արժեքների մասին տեսությանը:

Խմաստաբանական կանխենթադրույթները բնորոշվում են նախադասությունների միջև հարաբերությամբ և սահմանվում հետևյալ կերպ՝

S նախադասությունը իմաստաբանորեն կանխենթադրում է մեկ այլ S' նախադասություն, միայն՝

(i) եթե S ճշմարիտ է, S' անհրաժեշտաբար ճշմարիտ է;

(ii) եթե S կեղծ է, S' անհրաժեշտաբար ճշմարիտ է:

Իմաստաբանական կանխենթադրույթի հասկացությունը կապված է անհրաժեշտության հետ: Համատեքստից դուրս՝ առանձին վերցված, նախադասությունները իմաստային առումով կայուն են և անփոփոխ, դրանք չեն կարող երկիմաստ լինել: Վերջինս վերագրելի չէ դարձվածային արտահայտություններին, որը և սահմանում է, որ դարձվածքները չեն կարող ուսումնասիրվել իմաստաբանական կանխենթադրույթների տեսանկյունից:

Վերոհիշյալն ապացուցում է այն, որ ոչ տրամաբանական, և ոչ էլ իմաստաբանական կանխենթադրույթները ի գործու չեն լիարժեք վերլուծել դարձվածքները և դրանց բառացի համարժեքները: Հետևաբար դարձվածքները պետք է ուսումնասիրել դրանց առկայացման տեսանկյունից, այլ ոչ թե առանձին, տեքստից անկախ վերցված: Հատկանշական է, որ միայն գործաբանական կանխենթադրույթն է թույլ տալիս դարձվածքի նման ուսումնասիրություն:

Գործաբանական կանխենթադրույթները բնորոշվում են նախադասությունների և պրոպոզիցիաների միջև հարաբերությամբ և սահմանվում հետևյալ կերպ՝ *A նախադասությունը գործաբանորեն կանխենթադրում է B պրոպոզիցիան, եթե A-ն տեղին է, միայն եթե B-ն փոխադարձաբար հայտնի է հաղորդակցության մասնակիցներին:*

Բերենք /16/ օրինակը, որից դուրս է բերվել /17/ դարձվածքը:

/16/ *ա. By God, I may be old fashioned in my ideas, but women run around too much these days to suit me. They meet all kinds of crazy fish* (Fitzserald 1987: 90).

բ. Աստված վկա, գուցե իմ գաղափարները ժամանակակից չեն, բայց մեր օրերում կանայք շատ են դեռ ու դեն ընկնում, շատ են սրա-նրա հետ քարշ գալիս (Ֆիցջերալդ 1981: 85):

/17/ *crazy fish*

/16ա./ նախադասության մեջ /17/ դարձվածքը, որն իրականում վերաբերում է այն մարդկանց, որոնք տարօրինակություններ ունեն կամ առհասարակ տարօրինակ են, այստեղ, կախված համատեքստից, վերաբերում է ցանկացած, ամեն պատահած մարդու: Նման թարգմանության համար մեծ դեր է խաղացել համատեքստը, քանի որ, եթե անգլերենի դարձվածքը դիտարկենք ասությանց դուրս, ապա այն այլ ներակա իմաստ կարտահայտի: Ինչպես տեսնում ենք, /16ա./ ասությունը դարձվածքը միանգամայն այլ կանխենթադրույթ ունի, որը պարզորոշ արտացոլված է /16բ./ համապատասխան թարգմանության մեջ: /16բ./ ասություն /17/ դարձվածքը թարգմանվել է *սրա-նրա* արտահայտությամբ, որը լիարժեք պարունակում է բնագրի դարձվածքի գործաբանական կանխենթադրույթը:

Արդյունքում, առանձին վերցված, դարձվածային արտահայտություններից ոչ մի պրոպոզիցիա չի հետևում և իմաստաբանորեն դրանք ոչինչ չեն կանխենթադրում: Սակայն հաղորդակցության մեջ, հետևաբար և համատեքստում դարձվածքները ձեռք են բերում գործաբանական կանխենթադրություններ:

Ուսումնասիրությունը փաստում է, որ հաճախ թարգմանությունը արտացոլում է բնագրի կանխենթադրույթը, սակայն լինում են դեպքեր, երբ խախտվում են որոշակի ազգամշակութային նորմեր, իսկ երբեմն էլ վերջիններից խույս տալու համար դարձվածքները տեղ չեն գտնում թարգմանության մեջ:

Հատկանշական է, որ բառացի թարգմանությունները կարևոր դեր են խաղում թարգմանվածքում, սակայն պետք է-հաշվի առնել, որ բառացի թարգմանությունները՝ պատճենումները, չպետք է հակադրվեն ընկալողի լեզվամտածողությանը, նրա սովորական դարձած զուգորդումների համակարգին, այլապես հնարավոր չէ հասնել դրական արդյունքի, այսինքն՝ համարժեք թարգմանության: Դիտարկենք /18/-ը, որը նույնպես պատճենման վառ օրինակ է:

/18/ ա. Gatsby believed in the green light, the organistic future that year by year recedes before us (Fitzgerald 1987: 156).

բ. Գեթսբիին հավատում էր կանաչ լույսին, երանելի ապագային, որ տարեցտարի հեռանում է մեզնից (Ֆիցջերալդ 1981: 144):

Ակնհայտ է, որ հայ ընթերցողը չի ունենա միևնույն հակազդեցությունը նշյալ օրինակն ընթերցելիս, ինչ անգլալեզու ընթերցողը: Կատարված է բառացի թարգմանություն: Բնագրի դարձվածքի համարժեքն է՝ *կանաչ ճանապարհ*: Անգլերենի *green light* դարձվածքն ունի *ապագա ծրագրերի, նպատակների իրականացում, ազատ գործողությունների հնարավորություն* իմաստային բաղադրիչը: Իսկ հայերենի *կանաչ լույս* պատճենումը չի արտացոլում այն իրական ֆոնը, որը նկատի է ունեցել հեղինակը նշյալ դարձվածքն օգտագործելիս: Բնականաբար, բնագրի դարձվածքի կանխենթադրույթը՝ *ապագայի հետ մեծ հույսեր կապող Գեթսբիի հավատը*, մնացել է բնագիր տեքստում, այն չի արտացոլվել թարգմանության մեջ: Իհարկե դարձվածքին հաջորդող *the organistic future*՝ *երանելի ապագային*, բառակապակցությունը փոքր-ինչ մեղմում է իրավիճակը և պատճառաբանում *green light* դարձվածքի օգտագործումը գեղարվեստական տեքստում:

Շատ դեպքերում թարգմանիչը փորձում է գտնել տվյալ իրականությանը համապատասխանող պատկերը թարգմանվող լեզվում, այսինքն՝ նա փորձում է հաղորդել կանխենթադրվող իմաստը համաբանության միջոցով: Օրինակ՝ /19/-ում կատարված է ճշգրիտ թարգմանություն համաբանության միջոցով:

/19/ ա. About five o'clock our procession of three cars reached the cemetery and stopped in a thick drizzle beside the gate — first a motor hearse, horribly black and wet, then Mr. Gatz and the minister and I in the limousine, and a little later four or five servants and the posman from West Egg, in Gatsby's station wagon, all wet to the skin (Fitzgerald 1987: 150).

բ. Ժամը հինգին երեք մեքենայից բաղկացած մեր թափորը հասավ գերեզմանատուն և կանգ առավ անձրևի տակ, դարպասի մոտ. առաջինը դիակառքը՝ սարսափելիորեն սև ու բաց, ապա լիմուզինը, որի մեջ էին քահանան, պարոն Գեթսը և ես, իսկ վերջում՝ Գեթսբիի բաց մեքենան՝ մեջը չորս կամ հինգ ծառա և Վեսթ Էգգի փոստատարը, բոլորն էլ մինչև ոսկորները թրջված (Ֆիցջերալդ 1981: 81):

Ինչպես տեսնում ենք, անգլերենի *wet to the skin* դարձվածքը հայերենում թարգմանվել է *մինչև ոսկորները թրջված*: Իհարկե դարձվածքի ֆոնն այլ է, սակայն ներակա իմաստը նույնն է՝ *ամբողջապես թրջվել*: Այստեղ ճանաչողական տեսանկյունից հետաքրքրական է այն փաստը, որ անգլերենի դարձվածքում կիրառված է *skin* գոյականը, իսկ հայերենում՝ *ոսկորները*:

Հետաքրքրական է, որ բնագիր տեքստում կարող են լինել շատ դարձվածքներ, որոնց թարգմանությունը չունի դարձվածքի կարգավիճակ թարգմանվող լեզվում, հետևաբար և չեն արձանագրվում դրա դարձվածքների ֆոնդում: Սակայն լինում են դեպքեր, երբ կատարված նկարագրական թարգմանությունը այնքան բնորոշ է լինում բնագրի դարձվածքին, որ նույնիսկ թարգմանության մյուս տեսակները ի գորու չեն արտացոլել բնագրի դարձվածքի կանխենթադրության բաղադրիչը:

/20/ ա. "Things went from bad to worse," suggested Miss Baker.

"Yes. Things went from bad to worse, until finally he had to give up his position" (Fitzgerald 1987: 16).

բ. - Եվ գնալով գործը բարդացել է, - մեջ բերեց օրիորդ Բեյքերը:

- Այո, գնալով գործը բարդացել է, և նա ստիպված թողել է աշխատանքը (Ֆիցջերալդ 1981: 17):

Ինչպես տեսնում ենք, կատարված է նկարագրական թարգմանություն, սակայն թարգմանության ձևական և բովանդակային կողմը դրանից բացարձակապես չի տուժել: Առավել հատկանշական է նաև այն, որ չի տուժել նաև դարձվածքի իմաստի կանխենթադրության բաղադրիչը՝ *գործի վատթարանալու փաստը*: Ս. Սեֆերյանի թարգմանությանը զուգահեռ ուսումնասիրել ենք Ա.Սուքիասյանի դարձվածաբանական բառարանում առկա նմանատիպ կանխենթադրույթ պարունակող դարձվածքները և փորձել հասկանալ, թե ինչու

թարգմանչը չի օգտագործել *go from bad to worse* անգլերեն դարձվածքին համարժեք կամ գոնե մոտ դարձվածքներ հայերենում, որը ի դեպ ամրագրված է Ա. Կունիին դարձվածաբանական բառարանում (Кунин 1955: 64):

Նշենք, որ Ա. Սուքիասյանի դարձվածաբանական բառարանում ամրագրված են /36/ օրինակում տեղ գտած դարձվածքի համարժեք դարձվածքները՝ *գործը/բանը բուրդ լինել (խսկց.)*, *բանը բուրդ/բամբակ դառնալ*, *գործը բլմբոցիկ լինել (բրբ.)* (Սուքիասյան 1975: 174):

Սակայն ակնհայտ է, որ նշյալ դարձվածքները ոճականորեն անհամապատասխան են գեղարվեստական թարգմանությանը, քանի որ խոսակցական են կամ բարբառային և ոչ մի կերպ չեն ծուլվի թարգմանության ոճին: Դա կլիներ, օրինակ՝ հետևյալ կերպ.

/21/ Եվ գնալով գործը/բանը բուրդ/բամբակ է դարձել:

Եվ՝ գնալով գործը բլմբոցիկ է դարձել:

Այսպիսով, այս դեպքում լիովին արդարացված է, թե ինչու է թարգմանիչը նախապատվությունը տվել բացատրական թարգմանությանը՝ ձեռքի տակ ունենալով համարժեք դարձվածքներ:

Գեղարվեստական թարգմանության մեջ հանդիպում են այնպիսի դեպքեր, երբ մի որևէ դարձվածք ինչ-ինչ պատճառներով թարգմանված չէ կամ ընդհանրապես առկա չէ թարգմանվածքում: Նման արտահայտություններ են լատիներենից փոխառված կայուն կապակցությունները, որոնց թարգմանության հարցում շատ հաճախ անճշտություններ են առաջանում:

/22/ ա. Well, first Daisy turned away from the woman towards the other car, and then she lost her nerve and turned back (Fitzgerald 1987: 124).

բ. Տեսնելով կնոջը, Դեյզին սկզբում թեքեց մեքենան, իսկ դիմացից եկող մեքենան խանգարեց, ու նա ետ տվեց (Ֆիցցերալդ 1981: 117):

Նշյալ օրինակից պարզ է դառնում, որ անգլերենի *lost her nerve* դարձվածքը բացակայում է հայերենի թարգմանության մեջ, որից հետևում է, որ բացակայում է նաև բնագրի դարձվածքի կանխենթադրույթը՝ այն է, որ *Դեյզին վախից կորցրեց ինքնատիրապետումը*: Անգլերենի *lost her nerve* դարձվածքը, կարող էր, եթե ոչ համարժեք, ապա գոնե համաբանական կամ նկարագրական թարգմանություններ ունենալ: Ա. Սուքիասյանի դարձվածաբանական բառարանում նման իմաստային բաղադրիչ ունեցող շատ դարձվածքներ կարելի է հանդիպել, օրինակ՝ *ահ առնել*, *ինքն իրեն կորցնել*, *գլուխը կորցնել*: Վերջինս, անշուշտ, իր համարժեքն ունի նաև անգլերենում՝ *lose one's head*, որը տարբեր իմաստային բաղադրիչներ ունի, սակայն առաջին իմաստով արտահայտում է հետևյալը՝ *հավասարակշռությունից դուրս գալ*, *չգիտակցել*: Ուսումնասիրու-

թյունը փաստում է, որ նման դեպքերը միայն աղավաղում են թարգմանությունը: Վերջինն էլ հանգեցնում է թարգմանվածքում դարձվածքների ներակա իմաստի բացակայությանը, որն արդեն լուրջ խնդիր է համարվում գեղարվեստական թարգմանության համար: Հենց այս դեպքում է կարևորվում դարձվածքների կանխենթադրության բաղադրիչի պահպանման խնդիրը:

Այդ է պատճառը, որ հնարավորինս շատ պետք է դիմել համարժեք թարգմանության, հատկապես դարձվածքների թարգմանության պարագայում, քանի որ դրանք ունեն իրենց ազգային և մշակութային յուրօրինակությունը:

Համարժեք թարգմանության միջոցով կարելի է լիարժեք արտահայտել այն ներակա իմաստը, որն առկա է բնագրի դարձվածքում

/23/ օրինակը ևս մեկ անգամ փաստում է, որ ներակա իմաստը կատարելապես պահպանված է: /24/ *u. He hesitated "No harm in trying," he said (Fitzgerald 1987:*

50). *բ. Նա տատանվեց: - Փորձը փորձանք չէ (Ֆիցցերալդ 1981: 47):*

Բնագրի ազգային յուրօրինակության հաղորդման հարցը թարգմանաբանության հիմնական խնդիրներից է, որից մեծապես կախված է թարգմանության ճշգրտությունը:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այսօր դարձվածների կանխենթադրույթների թարգմանության ուսումնասիրությունը լեզվաբանության և հատկապես գործաբանության և թարգմանաբանության ուսումնասիրության ամենահանգուցային և միևնույն ժամանակ բարդ խնդիրներից մեկն է: Կատարված ուսումնասիրությունը գալիս է փաստելու, որ դարձվածքների թարգմանության տեսակները տարբեր կերպ են բնորոշում թարգմանվածքում դարձվածքի կանխենթադրության բաղադրիչի արտացոլումը: Համարժեք թարգմանությունը լիովին կրում է բնագրի դարձվածքի կանխենթադրույթը, որը մեր ուսումնասիրության հանգուցային և ամենակարևոր նախապայմանն է: Համաբանական թարգմանությունը նույնպես արտացոլում է բնագրի կանխենթադրույթը, սակայն այս դեպքում արդեն թարգմանվածքում դարձվածքի պատկերային հիմքն այլ է, որն, իհարկե, կախված է ազգամշակութային բաղադրիչից:

Ինչ վերաբերում է պատճենմանը և նկարագրական թարգմանությանը, ապա այստեղ դարձվածքների ներակա իմաստի պահպանումը որոշ դեպքերում արդյունավետ է, որոշ դեպքերում՝ ոչ: Դա կախված է արդեն համատեքստից և ֆոնային գիտելիքներից: Ուսումնասիրությունը վկայում է, որ դարձվածքների ոչ իմաստաբանական և ոչ տրամաբանական կանխենթադրույթները չեն կարողանում բացատրել կանխենթադրույթի վարքը համատեքստում և ի վերջո իրենց տեղը զիջում են գործաբանական կանխենթադրույթներին:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ գործաբանական կանխենթադրույթները կախված են համատեքստից և առկայացվում են հենց համատեքստում:

Հատկանշական է, որ բնագրի դարձվածքների կանխենթադրույթները թարգմանության արդյունքում կարող են կամ պահպանվել կամ ոչ, կամ էլ ամբողջովին բացակայել:

Վերը շարադրվածը, ի վերջո, հանգեցնում է այն եզրակացությանը, որ դարձվածքների լիարժեք թարգմանության համար դրանց կանխենթադրույթների պահպանումը թարգմանվածքում պարտադիր պայման է հանդիսանում:

Գրականություն

1. Բաղդասարյան Հ., Թարգմանաբանության ներածություն, Ե., Ասողիկ, 2007. - 264 էջ
2. Նազարյան Ա., Բաղդասարյան Հ., Թարգմ. ուս. ծեռնարկ, Ե., Ամարաս, 2000. - 400 էջ
3. Սուրբասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատ., 1982. - 440 էջ
4. Kavka S., A book on Idiomatology, University of Zilina, Slovakia, 2003. - 150 pp., [ONLINE], Retrieved December 2009. Web site: <http://books.google.ru/books?id=foeUGAAACAAJ&dq=Kavka++A+book+on+Idiomatology&cd=1>
5. Levinson S., Pragmatics, Cambridge, Cambridge University Press, 1983. - 420pp
6. Peccei J., Pragmatics, Great Britain, Cornwall press, 1999. - 96pp. [ONLINE], Retrieved October 2009. Web site: <http://books.google.ru/books?id=xHTerd7-3KAC&printsec=frontcover&dq=Peccei+Pragmatics&cd=1#v=onepage&q&f=false>
7. Strässler Jürg, Idioms in English: a pragmatic analysis. Tübingen: Günter Narr, 1982. -160pp. [ONLINE], Retrieved February 2010. Website: <http://books.google.ru/books?id=phQ9FyxIIPsC&printsec=frontcover&dq=Str%C3%A4ssler-J%C3%BCrg++Idioms+in+English&cd=1#v=onepage&q&f=false>
8. Hickey L., The Pragmatics of Translation /Chap 7, Presupposition and translation/, Great Britain, Cromwell press, 1998, 114-124pp. [ONLINE], Retrieved October 2009. Web site: <http://books.google.ru/books?id=RLWcp8a74Cpg=PA4q=Hickey L.>
9. Նազարյան Ա., Անգլերեն դարձվածքների ուսումնական համառոտ բառարան, Երևան, Ամարաս հրատ., 2000. - 219 էջ
10. Սեֆերյան Ա., Հովհաննիսյան Վ., Լազարյան Ա., Անգլերեն - հայերեն դարձվածաբանական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1986. - 246 էջ
11. Սուրբասյան Ա., Չալստյան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1975. - 675 էջ
12. Кунин А., Англо – русский фразеологический словарь, М., ГИИНС, 1955 1455 с.
13. Oxford Advanced Learner's Dictionary of Current English, Oxford, Oxford University Press, 2004. -1539 pp.
14. The American Heritage Dictionary of Idioms, US, Houghton Mifflin Company, 1997. - 729 pp., [ONLINE], Retrieved March 2010. Web site: <http://books.google.ru/books?id=9relvfFh04sC&pg=PA49&dq=37.%09+The+American+Heritage+Dictionary+of+Idioms&cd=1#v=onepage&q&f=false>
15. Cultural Presuppositions and Misreadings /Article/, Retrieved January 2010 <http://id.erudit.org/iderudit/003296ar>
16. Presuppositions in Literary translation: A corpus – Based Approach /Article/, Retrieved December 2009 <http://erudit.org/revue/meta/2004/v49/n2/009355ar.pdf>
17. Pragmatics and Translation: The Problem of Presupposition /Article/, Retrieved November 2009 <http://id.erudit.org/iderudit/037142ar>